



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍՄԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍՄԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՑԻ
ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ 1-ԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Երևան-2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

Լյուդվիգ Դավթյան

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

2. (ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՍԱՍ) ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ
ԱՅՍ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 7

3. «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՈՐՊԵՄ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱԳՐՅԱԼ 18

4. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ 21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 22

Մարինա Միսնյան

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 23

2. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՍԱՍ 26

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 34

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանյան հասարակության զարգացման արդի փուլում անհրաժեշտություն է առաջանում առանձնակի ուշադրություն դարձնել փաստաբանության ինստիտուտի, որպես մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմներից մեկի, կայացմանն ու զարգացմանը: Հայաստանում ընթացող դատաիրավական բարեփոխումների ընթացքում որոշակի վերափոխումներ կատարվեցին նաև փաստաբանության ոլորտում, սակայն ներկայումս այն կարիք ունի այնպիսի բարեփոխումների, որոնք թույլ կտան զգալիորեն մեծացնել փաստաբանության համակարգի դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, ապահովել արդարադատության մատչելիությունը և իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքը: Կարևոր նշանակություն ունի նաև իրավաբանական բուհերի ուսանողների հետաքրքրության բարձրացումը և կողմնորոշումը դեպի փաստաբանի մասնագիտությունը, կրթական ծրագրերում «փաստաբանություն» առարկայի ընդգրկումը և բազմակողմանի ուսումնասիրությունը:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան և Հայաստանի իրավաբանական հիմնադրամը, ելնելով Հայաստանում փաստաբանության համակարգի կայացմանն ու զարգացմանն աջակցելու իրենց ռազմավարական նպատակներից, 2004 թվականի մայիսին կազմակերպեցին «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական 1-ին գիտաժողովը, որի կազմակերպմանը ներգրավվեց նաև Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Իրավաբան ուսանողների բաժանմունքը: Գիտաժողովի կազմակերպմանը աջակցեցին Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության Հայաստանի գրասենյակը և «Բուկինիստ» գրատունը: Գիտաժողովին մասնակցեցին Հայաստանում գործող տարբեր բուհերի իրավաբանական ֆակուլտետների 17 ուսանողներ: Գրավոր փուլում առավելագույն միավորներ հավաքած 10 լավագույն զեկույցների հեղինակները, նախապես սահմանված կանոնների համաձայն, իրավունք ստացան որպես զեկույցողներ մասնակցել

գիտաժողովի եզրափակիչ՝ բանավոր փուլին, որը տեղի ունեցավ 2004թ.-ի մայիսի 20-ին Երևանում: Գիտաժողովի հաղթող ճանաչվեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Լյուդվիգ Դավթյանը, որը հաղթեց նաև գիտաժողովի բանավոր փուլում: Գրավոր փուլի հաղթող ճանաչվեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Մարինա Միմոնյանը, իսկ հատուկ մրցանակի արժանացավ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Սոնա Հարությունյանը:

Սույն գրքույկում զետեղվել են գիտաժողովի երկու լավագույն զեկույցները՝ ներկայացված Լյուդվիգ Դավթյանի և Մարինա Միմոնյանի կողմից:

Փաստորեն, գիտաժողովն առաջին փորձն էր իրավաբան ուսանողների շրջանում քննարկումներ անցկացնելու փաստաբանության ինստիտուտի ներկա վիճակի և հրատապ հարցերի շուրջ: Ակնկալվում է, որ նմանատիպ միջոցառումներ կկազմակերպվեն նաև ապագայում:

1. ԼԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին միջազգային հանրությունը մեծ առաջընթաց է գրանցել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Ամրապնդվում են առկա միջազգային ընթացակարգերը, աճում է մարդու իրավունքների ոլորտում տարբեր միջազգային հիմնարար փաստաթղթեր ստորագրած և վավերացրած պետությունների թիվը, զարգանում են ժողովրդավարական ինստիտուտները պետությունների ներսում:

Իրոք, մեր օրերում միջազգային կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների գրեթե բոլոր ոլորտների վերաբերյալ ընդունված են փաստաթղթեր, որոնցից մոտ երեք տասնյակին միացել է Հայաստանի Հանրապետությունը¹: Այդ ակտերից հատկապես կարևորներն են՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», 1966 թ. ընդունված «Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» ու «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրերը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան՝ ընդունված Եվրոխորհրդի կողմից 1950 թ. և այլն:

Քաղաքակիրթ աշխարհում կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց ոտնձգություններից քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ամենատարածված միջոցներից է, օրինակ, մարդու իրավունքների հարցերով խորհրդարանական լիազորի (ombudsman) սկանդինավյան ինստիտուտը: Այն՝ որպես ժողովրդավարական ինստիտուտ, բոլորովին վերջերս կազմավորվեց նաև Հայաստանում²: Սա մեծագույն ձեռքբերում է մեր երկրում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Այսօր մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներով զբաղվում են հասարակության ու

¹ *St'u Human Rights. International Instruments, Chart of Ratifications as at June 1996, United Nations, New York and Geneva, 1996:*

² «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքն ընդունվել է 2003 թ. հոկտեմբերի 21-ին:

պետության բոլոր խավերը՝ պետական կառավարման մարմինները, գործարար աշխարհը, քաղաքացիական հասարակությունը: Սակայն նրանց մեջ հատկապես անհրաժեշտ է առանձնացնել փաստաբանությանը՝ որպես առավել ժողովրդավարական ինստիտուտի և մարդու իրավունքների լավագույն պաշտպանի: Չէ՞ որ, ի տարբերություն վերջինիս, իրավունքների պաշտպանության գործընթացում ներգրավված խավերի մեծ մասը չունեն անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն՝ իրավական կատեգորիաներ վերլուծելու և կիրառելու համար:

Ըստ արդարադատության հիմնական կանխադրույթի (պոստուլատի)՝ դատապարտման և պատժի պետք է ենթարկվեն միայն այն մարդիկ, ովքեր, իրոք, մեղավոր են: Անմեղներն, անտարակույս, չպետք է ենթարկվեն պատասխանատվության: Արդարադատության այս հիմնական և լրջագույն խնդրի իրագործումը իրավապահ մարմինների բոլոր աշխատողների սուրբ պարտականությունն է, սակայն, առավել մասնագիտացված, այդ գործը կատարում են փաստաբանները, իսկ քրեական դատավարությունում՝ պաշտպանները: ՌԻստի, որքան կատարյալ է պետությունում փաստաբանության ինստիտուտը, այնքան պաշտպանված են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, երաշխավորված է դրանց անշեղ իրականացումը: Իսկ փաստաբանության ինստիտուտի ձևավորման և զարգացման համար հատկապես կարևոր է ներպետական համապատասխան օրենսդրության առկայությունը, դրանում առկա ձևակերպումների (դրույթների) պարզությունն ու հստակությունը, օրենսդրության մեջ հակասությունների բացակայությունն ու գործուն նորմերի սահմանումը:

Փաստաբանության նկատմամբ մեծ ուշադրությունն ու լուրջ վերաբերմունքը յուրաքանչյուր իրավական պետության խնդիրն է: Դա պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ փաստաբանությունը կոչված է նպաստել արդար ու անկողմնակալ արդարադատության իրականացմանը: Առանց հզոր փաստաբանության խոսք չի կարող լինել անձի իրավունքների պաշտպանության, մրցակցային դատավարության և արդարադատության ճիշտ իրականացման մասին:

2.ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ (համառոտ)
ԱՅՍ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԱԳՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Փաստաբանությունը իրավապաշտպան գործունեություն իրականացնող սոցիալ-հանրային ինստիտուտ է, որը կոչված է իրավաբանական օգնություն ցույց տալ ֆիզիկական և իրավաբանական անձանց, պաշտպանել նրանց իրավունքներն ու օրինական շահերը օրենքով չարգելված բոլոր միջոցներով, ինչպես նաև՝ նպաստել արդարադատության իրականացմանը (ադվոկատ-փաստաբան՝ լատիներեն նշանակում է «օգնություն կանչել»):

Փաստաբանության էությունը, նրա դերն ու նշանակությունը ճիշտ ըմբռնելու համար նախևառաջ անհրաժեշտ է մի փոքր էքսկուրս կատարել դեպի պատմական անցյալ՝ անդրադառնալով փաստաբանության ծագմանն ու դրա էվոլյուցիոն զարգացմանը, որը հնարավորություն կտա առավել լավ պատկերացնել փաստաբանության նախկին ու ներկա վիճակը և դրա զարգացման հեռանկարները:

Փաստաբանի ինստիտուտը հայտնի էր դեռ Հին Հռոմում (պատրոնաժի ինստիտուտը), իսկ 13-րդ դարից՝ Անգլիայում, ապա՝ Ֆրանսիայում և Գերմանիայում: 19-րդ դարում այն լիակատար ձևավորում ստացած ինստիտուտ էր Անգլիայում¹: Ռուսաստանում փաստաբանությունը վերջնականորեն ստեղծվել է 19-րդ դարում²:

Փաստաբանության զարգացման պատմությունն ընդունված է բաժանել երեք հիմնական փուլերի.

Առաջին փուլում փաստաբանությունը համարվում էր **մասնավոր արհեստ**, որը նման էր ցանկացած այլ արհեստավորի զբաղմունքի: *Երկրորդ փուլում*՝ այն արդեն ուներ կառավարական կամ **պետական պաշտոն**՝ կարգավիճակ: *Երրորդ փուլում*՝ այն հանդես էր գալիս որպես **ազատ մասնագիտություն**, որն էլ իրականացվում էր մասնավոր և հանրային շահերի պաշտպանության համատեղմամբ: Քանի որ այդ գործունեությունն ուներ հանրային բնույթ և նպատակ էր հետապնդում օժանդակել ինչպես անձի,

¹ Տե՛ս Թիչեւի / . / . . . Օաի էի աի ա նոաի ՚ի ժի էչաի աի ժաի . Ն-ի՝ 1914 . էջ 277- 293:

² Տե՛ս Էօձօձա Բ.Օ. Աաաի էաժօձա ա Թի նիեե . 1 ի նեաա 2001:

այնպես էլ հասարակության և պետության շահերի պաշտպանությանը, ապա անհրաժեշտություն առաջացավ օրենսդրորեն կարգավորել փաստաբանությամբ զբաղվելու ցանկություն ունեցող անձանց ներկայացվող պահանջները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև՝ այդ անձանց գործունեության նկատմամբ պետական վերահսկողության հարցերը: Եվ, քանի որ պետության միջամտությունը փաստաբանության ներքին կյանքին վտանգի տակ կդնեն դրա ինքնուրույնությունն ու անկախությունը, փաստաբանությունը ձևավորվեց որպես հատուկ հասարակական միավորում, որն ուներ որոշակի ինքնուրույնություն առօրյա հարցերի լուծման գործում և իրավունք ուներ կարգապահական պատասխանատվության ենթարկել իր անդամներին:

Հայաստանը, լինելով իրավական արժեքներ ունեցող պատմական երկիր, բնական է, չէր կարող չստեղծել կամ չունենալ փաստաբանի (պաշտպանի) ինստիտուտ, որը որոշակիորեն ուրվագծվում էր Մխիթար Գոշի Դատաստանագրքում (1184թ.), բայց ավելի հստակորեն՝ սահմանվում էր «Որոգայթ փառացում» (ըստ տիտղոսաթերթի՝ 1773թ.): Այստեղ առաջին անգամ հանդիպում ենք *ատենարան* հասկացությանը, որը ոչ այլ ինչ է, քան մեր օրերի փաստաբանը՝ պաշտպանը: Այսպիսով, «Որոգայթ փառացը», հայ իրավունքում առաջինը ժամանակի առումով, բավարար հստակությամբ սահմանեց դատավարության ակտիվ մասնակիցներից մեկի՝ *ատենարան-փաստաբանի* ինստիտուտը (առաջին անգամ տալով նաև նրա կոնկրետ իրավասության օրենսդրական ձևակերպումը), որն իր ֆունկցիայով, նպատակով հիմնականում համապատասխանում է դրա ժամանակակից ըմբռնմանը¹:

Սակայն պետք է նշել, որ Հայաստանի փաստաբանության պատմության մասին մեզ շատ քիչ տեղեկություններ են հասել: Միայն հայտնի է, որ 1922թ. մայիս-հունիս ամիսներին դատաիրավական համակարգի այլ մարմինների հետ զուգահեռ սկսել է գործել հայ փաստաբանների կոլեգիան: Այն մինչև 1979թ. ղեկավարվել է Խորհրդային Միության կառավարության ու արդարադատության նախարարության բազմատեսակ որոշումներով և այլ օրենսդրական

¹ Տե՛ս «Որոգայթ փառաց», Թիֆլիս, 1913 թ. էջ 154:

ակտերով: 1979թ. ընդունվում է ԽՍՀՄ օրենքը «Փաստաբանական ծառայության մասին», 1980թ. նոյեմբերի 13-ին այդ օրենքի հիման վրա՝ ՀՍՍՀ օրենքը «Հայկական ՍՍՀ փաստաբանական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին»:

Խորհրդային իշխանության ժամանակաշրջանում փաստաբանությունն ամբողջությամբ գտնվում էր գործադիր իշխանության՝ մասնավորապես, արդարադատության նախարարության վերահսկողության տակ: Փաստաբանների կոլեգիայի ձևավորման և գործունեության կարգը որոշվում էր կառավարության և արդարադատության նախարարության ընդունած ենթաօրենսդրական ակտերով: Գործադիր իշխանության մարմինը կարող էր նույնիսկ վերացնել փաստաբանների կոլեգիայի ընդհանուր ժողովի որոշումները, ցրել նախագահությունը և նշանակել նոր ընտրություններ: Նման պայմաններում փաստաբանությունը, որպես ժողովրդավարական ինստիտուտ, կորցրել էր իր դերն ու նշանակությունը:

Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրության ընդունումից հետո դատարանակազմական և դատախրավական բարեփոխումների ընթացքում անհրաժեշտություն առաջացավ նոր մոտեցումներ ցուցաբերել փաստաբանության ինստիտուտին և վերակառուցել այն: Գլխավոր խնդիրը հանդիսացավ փաստաբանության ինքնուրույնության հաստատումն ու ընդլայնումը, նրա անկախության ապահովումը՝ հատկապես գործադիր իշխանության մարմիններից և դատարանից: Անհրաժեշտ էր արմատապես փոխել փաստաբանության վերաբերյալ ստեղծված այն թյուր կարծիքը, թե այն վնասում է արդարադատության իրականացմանը, վերացնել փաստաբանների նկատմամբ եղած անվստահությունը և բարձրացնել նրանց հեղինակությունը:

Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ էր ընդունել նոր օրենք, որը նորովի կկարգավորեր փաստաբանական գործունեության հետ կապված հարաբերությունները, կվերացներ փաստաբանության կախվածությունը այլ մարմիններից, կսահմաներ այս ինստիտուտին բնորոշ ժողովրդավարական դրույթներ: 1998 թ. հունիսի 18-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվեց և նույն թվականի հուլիսի 18-ին հանրապետության նախագահի կողմից ստորագրվեց «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ

մտավ 1998 թ. սեպտեմբերի 1-ին: Բացի նշված օրենքից, փաստաբանական գործունեությունը կարգավորվում է նաև ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով և այլ օրենքներով: Բայց փաստաբանության **ներկա վիճակն** արտացոլող հիմնական օրենսդրական ակտը, իր դրական ու բացասական կողմերով հանդեձ, հանդիսանում է «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ 1998 թ. օրենքը (այսուհետ՝ օրենք), որի առավելություններն ու թերությունները վեր հանելն ու վերլուծելը թույլ կտա պարզել Հայաստանում փաստաբանության ներկա վիճակը և դրա զարգացման հեռանկարները: Հատկապես անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այնպիսի սկզբունքային հարցեր, որոնք կապված են համապատասխան օրենսդրության թերությունների հետ և էական նշանակություն ունեն փաստաբանության կազմակերպման և արդյունավետ գործունեության իրականացման համար: Փորձենք ներկայացնել մեր օրենսդրության մեջ տեղ գտած թերի ու, մեր կարծիքով, փոփոխման (լրացման) կարիք ունեցող որոշ նորմեր, որոնց վրա կառուցվում է այսօրվա փաստաբանությունը Հայաստանում: Կարծում ենք, այդպիսի դրույթների քննարկումն ու փոփոխումը հրատապ է մեր հանրապետությունում փաստաբանի ինստիտուտի զարգացմանը զարկ տալու համար:

Այսպես, «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբաններն ունեն միավորումներ կազմելու իրավունք: Օրենքի այս նորմը հիմնված է ՀՀ Սահմանադրության 25 հոդվածի վրա, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորվելու... իրավունք: Միաժամանակ, քննարկվող օրենքի 24 հոդվածի համաձայն՝ *փաստաբանների միություններն* ունեն իրավաբանական անձի կարգավիճակ և գրանցվում են Վճռաբեկ դատարանում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանների միություններն անկախ ինքնակառավարվող միավորումներ են և օգտվում են հասարակական կազմակերպությունների համար օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից: Ընդ որում, փաստաբանների միություն ստեղծվում է նրա հիմնադիրների (առնվազն 50 փաստաբան և որակավորման քննություն հանձնած և համապատասխան վկայագիր ունեցող անձինք) նախաձեռնությամբ հրավիրված հիմնադիր ժողովի

որոշմամբ («Փաստաբանական գործունեության մասին») օրենքի 25 հոդվածի 1-ին մաս):

Նախ՝ անդրադառնանք օրենքի 25 հոդվածի 1-ին մասի, այսպես ասած, անկատարությանը: Օրենքը սահմանելով պարտադիր 50 փաստաբանների միավորման անհրաժեշտություն, ստույգ չի կարգավորում այն հարցը, թե ինչպես վարվել, երբ 50 փաստաբաններից մեկը, ասենք, մահանում է կամ այլ հիմքով դուրս է գալիս միությունից: Փաստորեն նման դեպքերում, եթե ղեկավարվենք օրենքի 29 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, այն պետք է լուծարվի՝ իր գործունեությամբ Սահմանադրությունը և օրենքները խախտելու հիմքով:

Բացի դրանից, նախատեսելով առանձին (տարբեր) *միություններ* ստեղծելու հնարավորություն, օրենքը միաժամանակ ցուցաբերել է *տարբերակված մոտեցում* փաստաբանների տարբեր միությունների նկատմամբ՝ որոշ դեպքերում նախապատվությունը տալով Հայաստանի Հանրապետության Փաստաբանների միությանը:

Օրինակ, օրենքի 11 հոդվածը սահմանում է. «Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար հավակնորդը Փաստաբանների միություն է ներկայացնում դիմում՝ միությանն անդամագրվելու խնդրանքով, որին կցվում է որակավորման պետական հանձնաժողովի տված վկայագրի պատճենը:

Հավակնորդի դիմումը քննարկվում և դրա վերաբերյալ որոշում է կայացվում *մեկամսյա ժամկետում*:

Դիմումը կարող է բողոքարկվել դատարան»:

Այնուհետև նույն հոդվածի 5-րդ մասը նշում է, որ «սույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով սահմանված պահանջները չեն տարածվում *Հայաստանի Հանրապետության Փաստաբանների միության վրա*: Սույն օրենքի 10 հոդվածի առաջին մասի պահանջները բավարարող անձինք համարվում են Հայաստանի Հանրապետության Փաստաբանների միությանն անդամագրված՝ *դիմում ներկայացնելու պահից*» (տե՛ս օրենքի 11 հոդվածը):

Փաստորեն օրենքի այս հոդվածից բխում է, որ Հայաստանի Հանրապետության Փաստաբանների միությանն անդամագրվող անձի կողմից արտոնագիր ստանալու համար նախատեսված է ավելի հեշտացված կարգ, քան այլ միության անդամագրվող անձի համար, քանի որ նա անդամագրված է համարվում դիմում ներկայացնելու

պահից: Գրա հետ մեկտեղ, որքանով է Հայաստանի Հանրապետության Փաստաբանների միությանը նպատակահարմար (ձեռնտու), առանց քննարկելու միությանը ներկայացված դիմումը, այն ներկայացրած անձին անմիջապես համարել իր անդամը: Այնպես որ, օրենքի այս պարտադիր (իմպերատիվ) պահանջը այնքան էլ ճիշտ չի թվում:

Նույն օրենքի 6 հոդվածի համաձայն՝ փաստաբանական գործունեությունը վճարովի է (1-ին մաս): Օրենքով նախատեսված դեպքերում անվճար իրավաբանական օգնությունն ապահովվում է Հայաստանի Հանրապետության Փաստաբանների միության միջոցով (3-րդ մաս): Ընդ որում, փաստաբանական ծառայությունները ֆինանսավորվում են պետական բյուջեից¹:

Հայաստանի Հանրապետության Փաստաբանների միությանը մի շարք իրավունքներ է վերապահել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը: Օրինակ, ՀՀ քր. դատ. օր. 70 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝ նշանակվելով Հայաստանի Հանրապետության Փաստաբանների միության կողմից՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա: Կամ, ՀՀ քր. դատ. օր. 70 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության Փաստաբանների միությունից պահանջում է փաստաբանին նշանակել պաշտպան... և այլն :

Ակնհայտ է, որ նշված դեպքերում նույնպես որոշակի տարբերակում է դրված Հայաստանի Հանրապետության Փաստաբանների միության և այլ միությունների միջև: Այսպիսի տարբերությունների սահմանումն, ըստ էության, խախտում է օրենքի առջև բոլորի հավասարության կարևորագույն սկզբունքը, փաստաբանության միասնականությունը, հետևաբար, մեր կարծիքով, պետք է վերանայել օրենսդրության նման մոտեցումները և փաստաբանների

¹ Պետք է նշել, որ օրենքի այս հոդվածի հիմքում ընկած է ԳԳ Սահմ. 40 հոդվածը, համաձայն որի՝ «յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար»: Վկայակոչենք նաև ԳԳ քր. դատ. օր. 10 հոդվածի 5-րդ մասը, որը սահմանում է , որ «քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել կասկածալի կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին՝ ելնելով նրա գույքային դրությունից»:

միությունների համար սահմանել հավասար պայմաններ և միասնական կարգավիճակ:

Անհրաժեշտ ենք համարում նաև որոշակիորեն անդրադառնալ «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների, մասնավորապես, ՀՀ 1998 թ. քրեական դատավարության օրենսգրքի հարաբերակցությանը, դրանց միջև առկա հակասություններին: Այսպես, «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ փաստաբանն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ձեռք բերել և ներկայացնել *սպացույցներ* (հոդվ. 18, 1-ին մասի 2-րդ կետ): Իսկ ահա ՀՀ քր. դատ. օր. 73 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է, որ «պաշտպանը իրավունք ունի քրեական գործով ձեռք բերել *նյութեր*, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար»: Ինչպես տեսնում ենք, այստեղ հակասությունն ակնհայտ է, քանի որ «նյութեր» և «սպացույցներ» հասկացությունները զգալիորեն տարբերվում են: Նախ՝ սպացույցների հասկացությունը տրված է ՀՀ քր. դատ. օր. 104 հոդվածի 1-ին մասում. «Քրեական գործով սպացույցներ են ցանկացած փաստական տվյալներ, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով *հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը* պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»: Միաժամանակ, ՀՀ քր. դատ. օր. 105 հոդվածի 1-ին մասը թվարկում է այն դեպքերը, երբ ձեռք բերված կամ ներկայացված *նյութերը* չեն կարող դրվել քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում և օգտագործվել որպես *սպացույց*: Ավելացնենք նաև, որ սպացույցները հավաքվում են նախաքննության և դատական քննության ընթացքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական և դատական գործողությունների կատարման ճանապարհով (ՀՀ քր. դատ. օր. 125 հոդվ.):

Ասվածից հետևում է, որ «նյութը» ավելի լայն հասկացություն է, քան «սպացույցը»: Այլ կերպ ասած՝ բոլոր սպացույցները նյութեր են, բայց բոլոր նյութերը չեն, որ սպացույց են. նյութը, փաստական տվյալը, սպացույց կարող է ճանաչվել վարույթն իրականացնող մարմնի

կողմից՝ օրենքով սահմանված կարգով: Նշանակում է՝ փաստաբանը (պաշտպանը) իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ձեռք բերել և ներկայացնել նյութեր (որոնք հետազայում կարող են ճանաչվել ապացույցներ), այլ ոչ թե ապացույցներ: ՈՒստի, «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, մեր կարծիքով, ապացույցների փոխարեն պետք է նշվեր նյութեր՝ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան:

Որոշակի հակասություն է նկատվում նաև ՀՀ քր. դատ. օր. 73 հոդվածի 3-րդ մասի և «Փաստաբանական գործունեության մասին օրենքի» 19 հոդվածի 3-րդ մասի միջև: Օրենքի նշված հոդվածը փաստաբաններին իրավունք է վերապահում հրաժարվել վստահորդի նկատմամբ իր ստանձնած պարտավորություններից միայն օրենքով, ինչպես նաև վստահորդի հետ կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում: Ի տարբերություն այս հոդվածի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը այս հարցում նախատեսել է բավականին իմպերատիվ դրույթ. պաշտպանն իրավունք չունի *ինքնակամ* դադարեցնել իր լիազորությունները, խոչընդոտել այլ պաշտպան հրավիրելուն կամ քրեական գործով վարույթին վերջինիս մասնակցելուն (քր. դատ օր. 73 հոդվ. 3-րդ մաս): Փաստորեն, եթե փաստաբանը քրեական գործով վարույթին մասնակցում է որպես պաշտպան, համաձայն քրեական դատավարության օրենսգրքի՝ իրավունք չունի *ինքնակամ* դադարեցնել իր լիազորությունները: Մեր կարծիքով, քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածն ավելի ճիշտ է. պաշտպանի՝ պաշտպանությունից ինքնակամ հրաժարումը կատեգորիկ արգելելը բխում է վստահորդի շահերից:

Իհարկե, Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով անցումային շրջանում, չէր կարող միանգամից ձևավորել կատարյալ օրենսդրություն, ունենալ կայացած փաստաբանություն: Այնուամենայնիվ, վերը քննարկված և այլ թերությունների առկայությունը օրենքում չի նշանակում, որ դրանում ընդհանրապես բացակայում են ժողովրդավարական նորմերը: Անշուշտ, փաստաբանական գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունն ունի նաև մի շարք դրական կողմեր, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները: Օրինակ, «Փաստաբանական

գործունեության մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածը նվիրված է փաստաբանի գործունեության **երաշխիքների**, համաձայն որի՝ փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին: Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կուսակցությունների և հասարակական միավորումների, լրատվության միջոցների միջամտությունը փաստաբանական գործունեության իրականացմանը: Հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ փաստաբանը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված պարտականություններին, «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» և միության կանոնադրության պահանջներին համապատասխան իրականացրած ցանկացած գործողության, այդ թվում՝ իր մասնագիտական պարտականությունները բարելիզը կատարելիս, դատարանում, իրավապահ և այլ մարմիններում հայտնած կարծիքի համար:

Այսպիսի երաշխիքների սահմանումը մեծապես նպաստում է արդարադատության իրականացմանը, քանի որ փաստաբանի անկախությունը և անհիմն հետապնդումներից նրա անձնական պաշտպանվածությունը անկողմնակալության, օբյեկտիվության և մրցակցային դատավարության ապահովման կարևորագույն երաշխիքներից են:

Օրենսդրությամբ հատկապես մեծ տեղ է հատկացված **փաստաբանական գաղտնիքի** պահպանմանը: Դա պայմանավորված է նրանով, որ, *ստաջին*. յուրաքանչյուր գործով էլ փաստաբանը հաղորդակից է դառնում իր վստահորդի անձնական կյանքի այնպիսի հանգամանքների, որոնք հայտնի չեն հանրությանը, և վստահորդը չի ցանկանում դրանց հրապարակումը, և *երկրորդ*. փաստաբանական գործունեության ընթացքում ստացված տեղեկությունները կարող են մեծ նշանակություն ունենալ գործի ճիշտ լուծման համար, իսկ դրանց հրապարակումը կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների (ապացույցների կորստի, ցուցմունքների փոփոխության և այլն), ինչն էլ կարող է ընդհանրապես շեղել գործի քննությունը և պատճառ հանդիսանալ դատարանի անհիմն ու անօրինական որոշման կայացման համար: Ուստի, գնահատելի է

օրենսդրությամբ փաստաբանական գաղտնիքի պահպանությանը մի շարք նորմեր նվիրելը:

«Փաստաբանական գործունեության մասին» օրենքի 8 հոդվածը տալիս է փաստաբանական գաղտնիքի բնորոշումը, սահմանելով՝ որ «փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները, որոնք վստահորդը գաղտնիության հիմունքներով փոխանցել է փաստաբանին, ինչպես նաև այն տեղեկություններն ու ապացույցները, որոնք փաստաբանը հայթհայթել է¹ ինքնուրույն փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում, և որոնք հայտնի չեն հանրությանը: Սրա հետ մեկտեղ, թե՛ «Փաստաբանական գործունեության մասին» օրենքը, թե՛ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում են մի շարք երաշխիքներ՝ փաստաբանական գաղտնիքի պահպանությունն ապահովելու համար:

Այսպես, օրենքի 19 հոդվածի 2-րդ կետը փաստաբանին պարտավորեցնում է չիրապարակել փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ ՀՀ քր. դատ. օր. 73 հոդվածի 2-րդ մասը փոխլրացնում է օրենքի վերոնշյալ հոդվածը՝ ամրագրելով, որ պաշտպանն իրավունք չունի հրապարակել այն տեղեկությունները, որոնք իրեն հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու ընթացքում, եթե դրանք կարող են օգտագործվել պաշտպանյալի շահերի դեմ: Այսպիսի երաշխիքներից է նաև ՀՀ քր. դատ. օր. 73 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը. «փաստաբանն իրավունք ունի առանձին, *կոնֆիդենցիալ*, անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի սահմանափակման»:

Հատկապես կարևոր նշանակություն ունի փաստաբանական գաղտնիքի պահպանության ապահովումը *քրեական գործով վարույթի ընթացքում*: Այս առումով օրենքի 21 հոդվածը արգելում է այն ապացույցների օգտագործումը, որոնք ձեռք են բերվել փաստաբանի անձնական խուզարկության կամ նրա բնակարանի խուզարկության արդյունքում, և որոնք պարունակում են փաստաբանական գաղտնիք: Հավելենք նաև, որ փաստաբանները որպես վկա չեն կարող հարցաքննվել պարզելու համար այնպիսի տեղեկություններ, որոնք

¹ Սեր կարծիքով, «հայթհայթել» եզրույթը իրավական տեսանկյունից աննպատակահարմար է օգտագործել օրենքում: Դրա փոխարեն կարելի էր օգտագործել «ձեռք բերել» բառը:

նրանց կարող են հայտնի լինել՝ կապված իրավաբանական օգնության դիմելու կամ նման օգնություն ցույց տալու հետ (ՀՀ քր. դատ. օր. 86 հոդվ., 2-րդ մասի 2-րդ կետ):

Այս հոդվածներից հետևում է, որ հատկապես կարևոր նշանակություն է տրված փաստաբանական գաղտնիքի պահպանությանը՝ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելիս: Ավելացնենք միայն, որ փաստաբանական գաղտնիքի պահպանման պարտականությունը չի սահմանափակվում ժամանակի մեջ:

3. «ՓԱՍՏԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՈՐՊԵՍ ՓԱՍՏԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼ

Անկասկած, Հայաստանի Հանրապետությունը բավականին լուրջ քայլեր է արել ժողովրդավարական, իրավական պետության կառուցման ճանապարհին և ունի ակնհայտ նվաճումներ նաև քննարկվող ոլորտում: Վերլուծելով Հայաստանում փաստաբանական գործունեության պրակտիկան և գործող օրենսդրությունը՝ այսօր մշակվել է «Փաստաբանության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, որն էականորեն տարբերվում է գործող օրենքից և բավականին դրական առաջարկություն է՝ իր պարզ ու մատչելի դրույթներով, ժողովրդավարական սկզբունքներով ու ինստիտուտներով: Ծիշտ է, այս նախագիծը ևս ունի որոշ բացթողումներ (օրինակ, փաստաբանների պալատի գրանցման, գրանցումը մերժելու և լուծարման մասին մանրամասն նորմերի բացակայությունը և այլն) թերություններ (օրինակ, հատուկ արտոնագիր ստանալու համար ՀՀ քաղաքացիությունը պարտադիր պահանջ չէ նախագծով և այլն), բայց ներկայացնենք միայն դրա այն նորմերը, որոնք, մեր կարծիքով, պետք է համարել Հայաստանում փաստաբանության զարգացման առաջնային նախադրյալներ, որպես դրա զարգացման հեռանկար՝ իրենց կարևորությամբ, ժողովրդավարական բնույթով ու հիմնարարությամբ:

Առաջին հերթին պետք է հիշատակել նշված նախագծի 3 հոդվածը՝ «փաստաբանությունը և պետությունը»: Այս հոդվածը փաստաբանությանը՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, առանձնացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից՝ թվարկելով փաստաբանության գործունեության **սկզբունքները**, որոնք մեծ մասամբ համապատասխանում են միջազգային նորմերով նախատեսված սկզբունքներին¹: Միաժամանակ այս հոդվածը նախատեսում է պետության կողմից փաստաբանությանը աջակցելու հնարավորություն: Կարևոր է հատկապես նախագծով

¹ Տե՛ս Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները: Ընդունվել է հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսի կողմից. Դավանա . 27 օգոստոսի – 7 սեպտեմբերի 1990 թ.:

փաստաբանների միությունների միաձուլման¹ արդյունքում փաստաբանների պալատի կազմավորման նախատեսումը (տե՛ս նախագծի 43 հոդվածը): Սրանով իսկ վերջ կտրվի փաստաբանների միությունների միջև տարիներ շարունակ գոյություն ունեցող մասնատվածությանը (խտրականությանը) և կապահովի փաստաբանության միասնականությունը, ինչն ընդունված է արտասահմանյան երկրների պրակտիկայում:

Ընդհանրապես, փաստաբանության զարգացման համար մեծ նշանակություն ունի փաստաբանների **բարձր որակավորումը և մասնագիտական բարձր պատրաստվածությունը**: Նախագիծը չի անտեսել այս հանգամանքն ու հետևողականորեն նախատեսել է համապատասխան հոդվածներ՝ ուղղված այս խնդրի լուծմանը, որը կարևոր է մեր երկրում փաստաբանության զարգացման համար:

Նախագծի 28 հոդվածը սահմանում է, որ փաստաբանական գործունեության արտոնագիր կարող է ստանալ անձը, 1) ով ունի բարձրագույն իրավաբանական կրթություն կամ իրավաբանի մասնագիտությամբ գիտական աստիճան և *իրավաբանի առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ*, 2) հանձնել է որակավորման քննություն և ստացել համապատասխան վկայագիր (համեմատության համար տե՛ս գործող օրենքի 10 հոդվածը): Փաստաբանների որակավորման բարձրացման է ուղղված նաև փաստաբանի *փորձնակների և օգնականների* ինստիտուտի նախատեսումը նախագծով (նախագծի հոդվածներ 23, 24): Բացի այդ, ըստ նախագծի 7 հոդվածի՝ փաստաբաններին վերապատրաստելը և որակավորման բարձրացումը կազմակերպելը հանդիսանում է փաստաբանների պալատի խնդիրներից մեկը: Նախագծով այս խնդրի լուծմանն է նվիրված նաև խրախուսանքի միջոցների նախատեսումը: Մասնավորապես, նախագծի 39 հոդվածը սահմանում է, որ երկարամյա գործունեության, անվճար կամ որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու, *մասնագիտական ձեռքբերումներ ունենալու* և այլ դեպքերում փաստաբանի նկատմամբ

¹ Նախագծում «միաձուլման» փոխարեն պետք է նշվեր «միացում», քանի որ նախագծի համապատասխան հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ փաստաբանների պալատը կազմավորվում է գործող փաստաբանների միությունների միացման, այլ ոչ թե միաձուլման արդյունքում:

կարող են կիրառվել խրուսանքի տեսակներ¹: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ այս առումով կարևոր է նախագծի 72 հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ «փաստաբանն իրավունք չունի զբաղվել այլ վճարովի գործունեությամբ, *բացառությամբ գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական աշխատանքի*»:

Հատկապես առանձնակի է նախագծի 6 հոդվածի 4-րդ մասի դերը ընդհանրապես ՀՀ օրենսդրության մեջ (հատկապես քաղաքացիական դատավարության): Այդ հոդվածը սահմանում է այն քաղաքացիական գործերը, որոնցով իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար: Այս հոդվածն ըստ էության **լրացրել է ԳԳ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան բացը**: Այսպիսով, ի տարբերություն «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ 1998 թ. օրենքի, «Փաստաբանության մասին» նոր օրենքի նախագիծը բավականին առավելություններ ունի, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին. *փաստաբանների պալատի և նրա անդամների լիազորությունների բավական հստակ ու մանրամասն կարգավորում* (օրինակ, գլուխ 2 և այլ գլուխներ), *փաստաբանի իրավունքների և պարտականությունների առավել մանրակրկիտ շարադրում* (18, 19, 20 հոդվածներ) և *մի շարք հարցերի իրավական կարգավորման՝ օրենքի մակարդակի բարձրացում*:

¹ *խրախուսանքի տեսակները և դրանց հնարավոր կիրառման դեպքերը, ի տարբերություն նախագծի, գործող օրենքով նախատեսված չեն, ինչը պետք է համարել օրենքի բացթողումներից մեկը*:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌԻսումնական գրականություն, մենագրություններ

1. Էբրաթաâ Բ.Օ. Աââî èàò à óâî èî áí î ì äâèâ. Լ î ñèââ "Բðèñò" 1997.
2. Էբրաթաâ Բ.Օ. Աââî èàòóðà à Ðî ññèè. Լ î ñèââ 2001.
3. Ðî çèî ù Ի . Ի . Օâî èî áí î à ñóâî î ðî èçâî àñòâî . Ռ-Ի . 1914.
4. Աââî èàòñèâÿ äâÿòâèւî î ñòւ . Օ÷âáí î -î ðâèòè÷-âñèî á î î ñî àèâ (î î á î áóâè ðââ. Ա.Ի . Աóðî àèî á). Լ î ñèââ 2001.
- 5.** Էâ÷âèî ââ Ի . Ա., Էâ÷âèî â . Ա.Է. Աââî èàòóðà à Ðî ññèéñèî é Օâââðâòèè. Օ÷âáí î á î î ñî àèâ. Լ î ñèââ 2000.

Նորմատիվ ակտեր և այլ փաստաթղթեր

1. Հայաստանի Հանրապետության 1995 թ. Սահմանդրություն.
2. «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ 1998 թ. օրենք.
3. «Փաստաբանության մասին» նոր օրենքի նախագիծ, 2004 թ.
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 1998 թ.
5. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 1998 թ.
6. Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները, Հավանա, 1990թ.
7. «Որոգայթ փառաց», Թիֆլիս, 1913 թ.:

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանությունը դասվում է հնագույն իրավաբանական ինստիտուտների շարքին: Հասարակությունը ստեղծել է փաստաբանական ինստիտուտը, քանի որ այն կոչված է եղել պաշտպանելու անձի իրավունքները և օրինական շահերը, վերջին հաշվով նաև հասարակության շահերը, քանզի յուրաքանչյուր անհատ հասարակության մի մասն է կազմում: Հետևաբար, մասնավոր և հանրային շահերի համատեղումը դառնում է փաստաբանության գործունեության գլխավոր խնդիրներից մեկը:

Հնագույն ժամանակներում Հին Հռոմում աղվոկատ էին անվանում դատավարության կողմ հանդիսացող անձանց հարազատներին կամ բարեկամներին, որոնց իրենք նախընտրում էին որպես դատաբանում ուղեկցող: Հիմնականում դա լինում էր պատրոնը՝ ընտանիքի հայրը, որը դատաբանում ներկայացնում էր իր ընտանիքի անդամներին: Այստեղից էլ այս ինստիտուտը անվանվեց պատրոնաժի ինստիտուտ: Պատրոնաժի ինստիտուտը հիմք հանդիսացավ ինչպես դատական ներկայացուցչության, այնպես էլ՝ փաստաբանության հիմնադրման համար:

Փաստաբանական ինստրտուտը փաստորեն ունեցել է զարգացման բավականին երկար ուղի, որը պայմանականորեն կարելի է բաժանել փուլերի:

Սկզբնական շրջանում փաստաբանությամբ զբաղվելը համարվում էր մասնավոր արհեստ: Այս գործունեությամբ զբաղվողները միավորվում էին տվյալ հասարակարգին հատուկ գիղդիաների կամ համքարությունների մեջ: Նրանց նկատմամբ չկար ոչ մի ազդող ուժ, վերահսկողության մարմին: Ունենալով շահադիտական նպատակներ՝ դրանք չէին ապահովում հասարակության շահերի պաշտպանությունը ու արդարությունը:

Կապված հասարակության և պետության զարգացման հետ՝ բարձրանում է փաստաբանական գործունեության հանրային նշանակությունը: Եթե նախկինում փաստաբանությունը ազատ մասնագիտություն էր, կազմակերպակառուցվածքային որևէ ձև չունեք, ապա այս շրջանում փաստաբանը դարձավ պետական պաշտոնյա. ինկվիզիցիոն դատավարությունում մեղադրյալի

ներկայացուցիչը հանդիսացող փաստաբանը հատուկ պաշտոնատար անձ էր, որը հետևում էր դատավարության ընթացքին: Միջնադարյան Եվրոպայում փաստաբանությունը գործում էր դատարանների, գործադիր իշխանության հսկողության տակ: Պետությունները ուղղակի շահագրգռված էին փաստաբաններին պահել իրենց ազդեցության ներքո: Վերածվելով, սակայն, պետական պաշտոնյայի՝ փաստաբանը կաշկանդված էր իր կարգավիճակով, կորցնելու էր իր ինքնուրույնությունը և չէր կարող պատշաճ ձևով իրականացնել անձի իրավունքների պաշտպանությունը: Օրինակ, Գերմանիայում մինչև 19-րդ դարի կեսերը փաստաբանի պարտականությունը դրված էր դատական կոլեգիայի կարգապահական ենթակայության տակ գտնվող պետական չինովնիկի վրա: Սակայն, 1877թ. ընդունված Քաղաքացիական դատավարության օրենսգրքով և 1959 թ. ընդունված «Փաստաբանության մասին» օրենքով փաստաբանությունը սկսեց գործել որպես «արդարադատության անկախ մարմին»: Փաստաբանի իրավունքները կարող էին սահմանափակվել միայն դաշնային օրենսդրությամբ՝ անկախ այն դատական ատյանից, որտեղ փաստաբանը ներկայացնում է իր վստահորդի շահերը: Ներկայումս Գերմանիայում փաստաբանները իշխող դիրք ունեն դատարաններում, փաստաբանի մասնակցությունը քաղաքացիական գործերին բոլոր դատական ատյաններում պարտադիր է:

Գնալով փաստաբանության ինստիտուտը զարգանում և ավելի բարձր դիրք է գրավում՝ կապված իրավագիտակցության մակարդակի բարձրացման, պետությունների զարգացվածության աստիճանի հետ: Հոլանդիայի փաստաբանները հայտնի են աշխարհում իրենց բարձր որակավորմամբ և պատրաստվածությամբ: Նրանք լուրջ կշիռ և ազդեցություն ունեն քաղաքականության բնագավառում: Ազգաբնակչությանը իրավաբանական օգնություն ցույց տալու տեսանկյունից Նիդերլանդները երկրորդ տեղն են զբաղեցնում Եվրոպայում՝ այդ նպատակների համար ծախսվող միջոցների առումով:

Փաստաբանության զարգացման երրորդ փուլում փաստաբանները ձևավորեցին փաստաբանական միություններ, որոնք օրենքի հիման վրա գործող անկախ և ինքնուրույն միավորումներ են և օգտվում են հասարակական կազմակերպությունների համար օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից: Այս փուլի գլխավոր

խնդիրը փաստաբանի մասնագիտական հմտությունների խորացումն է, փաստաբանական միությունների հզորացումը, ինչպես նաև օժանդակումը երիտասարդ կադրերի ձևավորմանը: Ֆրանսիայում, որտեղ փաստաբանը ժողովրդի մեջ բարձր հեղինակություն է վայելում և օգտվում է մեծ ազատությունից, փաստաբանական գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ է ոչ միայն մասնագիտական դիպլոմ ունենալը, այլ նաև ազգությամբ ֆրանսիացի լինելը, նախապատրաստման կենտրոնում նախապատրասված լինելը, ինչպես նաև՝ համապատասխանելը բարոյական որոշ չափանիշների: Փաստորեն, փաստաբանի ցուցակների մեջ ընդգրկվելու պահանջները բավականին խիստ են, որոնք էլ ընդգծում են փաստաբանի դերն ու նշանակությունը հասարակության մեջ և դատախիբավական համակարգում:

Փաստաբանությունը լիարժեք կարող է գործել միայն ժողովրդավարական պետությունում, երբ հռչակված և երաշխավորված է մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

2. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Ներկա ժամանակաշրջանում յուրաքանչյուր պետության համար կարևորագույն խնդիր և նոր հասարակության ձևավորման պահանջ է դարձել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու հարգումը: Այդ կապակցությամբ ստորագրվել և ընդունվել են միջազգային մի շարք փաստաթղթեր՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. ընդունված «Մարդու իրավունքների համընդանուր հռչակագիրը», «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան (1950թ.), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (1966թ.), «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (1966թ.), Քաղաքացիական դատավարության վերաբերյալ կոնվենցիան (1954թ.) և այլն, որոնց անդամագրվել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

1995թ. հուլիսի 5-ին Սահմանադրության ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց ինքնիշխան, ժողով-րդավարական, սոցիալական և իրավական պետություն, որտեղ պետական իշխանությունը իրականացվում է ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման հիման վրա (հոդված 1, 5): Սահմանադրության ընդունումից հետո կատարվեցին դատաիրավական բարեփոխումներ: Գրանք տվյալ ժամանակաշրջանի պահանջն էին և անհրաժեշտ էին իրավական պետություն ստեղծելու, որպես բարձրագույն արժեք՝ մարդու իրավունքները և ազատությունները ամրագրելու, քաղաքացիների և կազմակերպությունների օրինական շահերը պաշտպանելու, ժողովրդավարությունը ամրապնդելու, անկախ և անաչառ արդարադատության համարակարգ ձևավորելու համար: Այս բարեփոխումները անհրաժեշտություն առաջացրին նոր մոտեցում ցուցաբերել փաստաբանության ինստիտուտի նկատմամբ, որը ևս վերանայվեց և վերակառուցվեց: Գլխավոր խնդիրներից մեկը փաստաբանության ինքնուրույնության հաստատումն ու ընդլայնումն էր, նրա անկախության ապահովումը պետական և ոչ պետական մարմիններից:

Պրակտիկան ցույց է տվել, որ փաստաբանությունը իր առջև դրված խնդիրները կարող է լուծել, եթե ունի կազմակերպարարական ինքնուրույնություն, ղեկավարվում է օրենսդրությամբ և անկախ է իր գործունեության մեջ: Խորհրդային իշխանության ժամանակաշրջանում փաստաբանությունը մեր երկրում նույնպես ինքնուրույն չէր և գտնվում էր գործադիր իշխանության՝ մասնավորապես, արդարադատության նախարարության վերահսկողության տակ: Գործադիր իշխանության մարմինները կարող էին վերացնել փաստաբանների կոլեգիայի ընդհանուր ժողովի որոշումները, ցրել նախագահությունը և նշանակել նոր ընտրություններ:

1998թ. հունիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և նույն թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտած «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքով ուժը կորցրած ճանաչվեց մինչ այդ գործող 1980թ. նոյեմբերի 13-ին «Հայկական ՍՍՀ փաստաբանական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» Հայկական ՍՍՀ օրենքը: Նոր ընդունված օրենքով փաստաբանական գործունեությունը Սահմանադրությամբ և օրենքով ճանաչված իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Այդ գործունեությունը փաստաբանն իրականացնում է խորհրդատվություն տալով, ներկայացնելով վստահորդին, նրա շահերը պետական և ոչ պետական մարմիններում և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, նաև՝ դատարանում հանդես գալով որպես պաշտպան:

Որպես պաշտպան հանդես գալ կարող է միայն օրենքով սահմանված կարգով արտոնագիր ստացած փաստաբանը:

Այսօր փաստաբանական միությունների խնդիրն է իրենց անդամների հեղինակության բարձրացումը և մասնագիտական ունակությունների ավելացումը, քանի որ Սահմանադրությունը, ընդլայնելով անձի իրավունքների ծավալը, ամրագրել է, որ յուրաքանչյուր ոք ունի իր ազատությունները և իրավունքները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք, ընդհուպ՝ դատական պաշտպանության իրավունք:

Իր առջև դրված նպատակներին և խնդիրներին հասնելու համար փաստաբանությունը, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ, գործում է անկախության, օրինականության, մարդասիրության, արդարության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, փաստաբանական գաղտնիքը պահպանելու, փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա: Նշված սկզբունքների իրականացումը ապահովելու համար օրենքը սահմանում է իրավական երաշխիքներ:

Փաստաբանական գործունեությունը վճարովի է, վճարի չափն ու կարգը որոշվում է փաստաբանի և ծառայություն ստանալու համար դիմած անձի միջև կնքված պայմանագրով, սակայն օրենքը նախատեսում է անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքեր, որն ապահովում է պետությունը՝ ՀՀ Փաստաբանների միության միջոցով:

Անվճար իրավաբանական օգնությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից: Սակայն ներկայումս օրենքում հնարավոր է կատարվեն որոշ փոփոխություններ, որի արդյունքում անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև անհատ փաստաբանը:

Փաստաբանները առաջնորդվում են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով, արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կուսակցությունների և հասարակական միավորումների, լրատվության միջոցների միջամտությունը փաստաբանական գործունեության իրականացմանը:

Փաստաբանը պետք է ապահովի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն մատուցելու հնարավորությունը: Փաստաբանական գաղտնիքը պահպանելը փաստաբանի պարտականությունն է, որը կարող է հրապարակվել օրենքով նշված դեպքերում: Գաղտնիքը պահպանելը չի սահմանափակվում ժամանակի մեջ: Փաստաբանը չի կարող որպես վկա հարցաքննվել այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով իրեն դիմելու կամ իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ (նախագիծ, հոդված 25):

Փաստաբանական գործունեության անկախությունը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով, քանի որ այն մշտական փոխհարաբերության մեջ է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հետ: Պետությունը փաստաբանական գործունեության նկատմամբ հսկողություն չի իրականացնում, բայց հետևում է, որպեսզի փաստաբանական միությունները և նրա անդամները գործեն օրենքի շրջանակներում, պահպանեն օրենսդրական պահանջները, չխախտեն այլոց իրավունքները և օրինական շահերը:

Համաձայն գործող օրենքի՝ փաստաբանները ունեն միավորումներ ստեղծելու իրավունք: Այդ միավորումների կազմակերպման կարգը հստակ նշված է օրենքով: Ընդ որում, փաստաբանը կարող է լինել միայն մեկ փաստաբանական միության անդամ: Համաձայն օրենքի 25 հոդվածի՝ փաստաբանների միությունները ստեղծվում են նրա հիմնադիրների (առնվազն 50 փաստաբան և որակավորման քննություն հանձնաժողով և համապատասխան վկայագիր ունեցող անձինք) նախաձեռնությամբ հրավիրված հիմնադիր ժողովի որոշմամբ: Փաստաբանական միությունները շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձինք են, որոնք, որպես սեփականություն, ունեն առանձնացված գույք: Փաստաբանական միությունները իրավաբանական անձի կարգավիճակ են ձեռք բերում սահմանված կարգով ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից գրանցվելու պահից:

Ներկայումս ՀՀ-ում գործում է երկու փաստաբանների միություն՝ ՀՀ Փաստաբանների միությունը և Փաստաբանների միջազգային միությունը: ՀՀ Փաստաբանների միությունը հանդիսանում է Հայաստանի Փաստաբանների կոլեգիայի իրավահաջորդը, իսկ Փաստաբանների միջազգային միությունը ստեղծվել է Հայ փաստաբանների միջազգային միության և Փաստաբանների միջազգային միության միաձուլման արդյունքում: Միությունների բարձրագույն մարմինը հանդիսանում է ընդհանուր ժողովը, որն ընտրում է միության նախագահ, կոլեգիալ ղեկավար մարմին (կոլեգիա, խորհուրդ), վերստուգիչ և կարգապահական հանձնաժողովներ:

Փաստաբանական գործունեություն կարող է իրականացնել սահմանված կարգով արտոնագիր ստացած փաստաբանը: Սակայն

ՀՀ Փաստաբանների միության անդամ լինելու համար բավական է, որ անձը համապատասխանի փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու պայմաններին՝ ունենա բարձրագույն իրավաբանական կրթություն և հանձնած լինի որակավորման քննությունները՝ ունենալով համապատասխան վկայագիր, և ՀՀ Փաստաբանների միություն անդամագրվելու դիմում ներկայացնի: Իսկ մնացած դեպքերում հավակնորդի դիմումը քննարկվում է Կոլեգիայի կողմից և դրա վերաբերյալ որոշում է կայացվում մեկամսյա ժամկետում: Դիմումը կարող է մերժվել միության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և մերժումը կարող է բողոքարկվել դատարան:

Չնայած ՀՀ-ում գործում են երկու առանձին փաստաբանական միություններ, դրանք ունեն միևնույն նպատակները և խնդիրները: Միությունների նպատակն է բարձրացնել իրենց անդամների հեղինակությունը, պայմաններ ստեղծել նրանց մասնագիտական գործունեության իրականացման համար, կազմակերպել նրանց ուսուցումը և վերապատրաստումը, պաշտպանել իրենց անդամների օրինական շահերը և իրավունքները բոլոր մարմինների հետ փոխհարաբերություններում: Ընդհանուր առմամբ երկու միությունների գործունեությունն ուղղված է Հայաստանում փաստաբանական գործունեության առաջադեմ համակարգ ստեղծելուն և զարգացնելուն, ինչպես նաև՝ բնակչության իրավագիտակցության բարձրացմանը: Այդ նպատակները իրագործելու համար միությունները կազմակերպում են սեմինարներ, կոնֆերանսներ, գիտաժողովներ, ուսումնական ծրագրեր, հրապարակում են ամսագրեր, որտեղ խորհրդատվության կարգով տպագրվում են տարբեր փաստաբանների կարծիքները այս կամ այն հարցի վերաբերյալ, իրականացնում են օրենքով չարգելված այլ գործողություններ:

ՀՀ-ում տեղի ունեցող փոփոխություններին համընթաց՝ փոփոխությունների ենթարկվեց նաև իրավական համակարգը: Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Փաստաբանական գործունեության մասին» օրենքի նախագիծը, որն առաջիկայում կներկայացվի Ազգային ժողով: Այդ առիթով կազմակերպվել են քննարկումներ, որոնց արդյունքում կազմվել է առաջարկությունների փաթեթ:

Նախագծում հստակեցված են փաստաբանական գործունեության սկզբունքները, ավելի բովանդակալից և ծավալուն են ներկայացված փաստաբանի իրավունքները և պարտականությունները, դրանց առանձնահատկությունները: Նշված նախագծով փաստաբանը կարող է ունենալ օգնական, որը սակայն չի կարող զբաղվել փաստաբանական գործունեությամբ, իսկ 5 տարուց ոչ պակաս փաստաբանական ստաժ ունեցող փաստաբանը իրավունք ունի ունենալ փորձնակ:

Նախագծով առաջին անգամ նախատեսված է, որ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս փաստաբանը փաստաբանների խորհրդի առջև հանդիսավոր պայմաններում երդում է տալիս: Բացի այդ, առաջին անգամ նախատեսված է նաև այն, որ փաստաբանը դատարանում հանդես գալու ժամանակ կրի պաշտոնական զգեստ, որի տեսակը պետք է որոշվի փաստաբանների պալատի խորհրդի կողմից, որը միասնական և պարտադիր է բոլոր փաստաբանների համար: Ճիշտ է, այս ամենը ձևական բնույթ է կրում, սակայն ինչ-որ չափով ավելի պաշտոնական տեսք է տալիս փաստաբանական ինստիտուտին: Եթե գործող օրենքով պետական ծառայողը չի կարող զբաղվել փաստաբանական գործունեությամբ, ապա օրենքի նախագծում դա միայն հանդիսանում է փաստաբանական գործունեության կասեցման հիմք, որն էլ կարող է ի կատար ածել փաստաբանների պալատի նախագահը՝ առավելագույնը 5 տարի ժամկետով:

Նմանատիպ այլ փոփոխություններ շատ կան նախագրծում, սակայն նախագծի հիմնական առանձնահատկությունը փաստաբանների պալատի ձևավորումն է: Նախագծի 2-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է փաստաբանների պալատի ձևավորմանը, խնդիրներին և գործունեությանը: Համաձայն նշված նախագծի 7-րդ հոդվածի՝ փաստաբանների պալատը մասնագիտական անկախ, ինքնակառավարվող միասնական մարմին է, որը ստեղծվում է օրենքի հիման վրա և հիմնադրվում է փաստաբանների ընդհանուր ժողովի կողմից: Փաստաբանների պալատը իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք է բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից, սակայն, եթե գործող օրենքով սահմանվում է, որ փաստաբանների միությունները գրանցվում են ՀՀ Վճռաբեկ դատարանում՝ ներկայացնելով գրանցման մասին դիմում, հիմնադիր

ժողովի արձանագրությունը, իրենց կանոնադրությունը և այլն, ապա նախագծով գրանցման կարգ չի սահմանված:

Նախագծի 43 հոդվածի համաձայն՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահը ժողովը վարում է մինչև փաստաբանների պալատի նախագահի ընտրվելը: Գործող օրենքում Վճռաբեկ դատարանում գրանցվելուց բացի՝ այստեղ է կատարվում նաև հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի գրանցումը, որի գործողության կասեցման իրավունքը ևս Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունն է: Նաև օրենքով նշված դեպքերում փաստաբանների միության լուծարման հարցը լուծում է դատարանը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի դիմումի հիման վրա: Օրենքի նախագծում Վճռաբեկ դատարանը չունի նման լիազորություն, իսկ փաստաբանների, ինչպես նաև հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի գործունեությունը կասեցվում է փաստաբանների պալատի նախագահի կողմից: Տվյալ դեպքում փաստաբանների պալատի նախագահը 5-օրյա ժամկետում միայն տեղեկացնում է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

Ձևավորելով մեկ պալատ՝ փաստաբանությունը կարող է ունենալ առաջընթաց՝ միավորելով և համատեղելով բոլոր փաստաբանների աշխատանքները, նրանց մասնագիտական գիտելիքները՝ ապահովելով պատշաճ դատական պաշտպանության իրավունքը: ՀՀ դատաիրավական փոփոխությունների հետևանքով առաջին քայլերը արդեն արված են փաստաբանության ինստիտուտի զարգացման համար: Դիշտ է, փաստաբանությունը որպես ինքնուրույն ինստիտուտ ձևավորվել է, սակայն միջազգային չափանիշների համեմատ այն դեռ զարգացում պետք է ապրի:

Փաստաբանների միությունները համագործակցում են միջազգային կազմակերպությունների հետ, որոնք աջակցում են դրանց գործունեությանը՝ անդամների համար կազմակերպելով ուսումնական սեմինարներ, դասընթացներ, աջակցելով ինչպես նյութական իրավունքի ոլորտում՝ քրեական իրավունք, քաղաքացիական իրավունք և փաստաբանական էթիկա, այնպես էլ գործնական հմտությունների ոլորտում՝ փաստաբանական բանավոր խոսք, «Իրտեկ» իրավաբանական տվյալների էլեկտրոնային շտեմարանի օգտագործման հարցեր և այլն:

Հասարակության առաջընթացը, շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացումը, դատաիրավական

բարեփոխումները հանգեցրել են փաստաբանության ինստիտուտի ձևավորմանը և հետագա ամրապնդմանը: Հասարակության մեջ լայն տարածում է ստացել ընտանեկան փաստաբանի ինստիտուտը, տնտեսավարող սուբյեկտները և քաղաքացիները իրենց իրավունքների պաշտպանության հարցերով ավելի ու ավելի հաճախ օգտվում են փաստաբանների ծառայություններից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր. Փաստաթղթերի ժողովածու, 2001թ.
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 1995թ.
3. ՀՀ օրենքը «ՀՀ փաստաբանական գործունեության մասին», 1998թ.
4. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, 2004թ.
5. Փաստաբանների միջազգային միության Կանոնադրությունը.
6. «Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները»՝ ընդունված հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսի կողմից, 1990թ.
7. Ս.Դիլբանդյան «ՀՀ Դատաբանակազմությունը և իրավապահ մարմինները», 2000թ.
8. *Ääâî ëàòñëäý ääýòäëüí î ñòü. Ó÷äáí î -í ðäëòè÷äñêî ä î î ñî äëä, î î ä ðää. Ä.Í Äóðî äëí ä. Í î ñëää* 2001.

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԳՅՈՒՄ»**



«Հայաստանի երիտասարդ իրավաբանների
ասոցիացիա» հասարակական կազմակերպություն



Հայաստանի իրավաբանական հիմնադրամ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍՏԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2
հեռ. 54-01-99, ֆաքս՝ 58-02-99
էլ. փոստ ayla@ayla.am

Ստորագրված է տպագրության՝ 27.09.2004թ.: Թուղթը՝ օֆսեթ 1:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպագրական մամուլ՝ 2.25:
Տպաքանակը՝ 100 օրինակ: Գինը՝ անվճար:

«ԳԵՎՈՐԳ - ԶՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորիչ 6:
Հեռ.՝ 52.79.74, 52.79.47
Էլ. փոստ lusakn@rambler.ru